

## ՈՒՂԵՑՈՒՅՑ

### «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքով սահմանված ներդրում ունեցող ռեզիդենտին արտոնության տրամադրման\*

1. Ռեզիդենտի հայտը կից փաստաթղթերով ներկայացվում է հանձնաժողով (ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն) պետական գրանցում ստանալու պահից մինչև չորրորդ տարվա հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում

2. Հանձնաժողովը հայտը ստացվելու երկամսյա ժամկետում քննության է առնում և դրա վերաբերյալ որոշումներ է ընդունում

3. Հանձնաժողովը հայտը քննարկելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունից քաղվածքի կամ արտոնության տրամադրման մասին որոշման օրինակը ուղարկում է հայտատուին

\*) համաձայն «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքի, եթե ռեզիդենտը պետական գրանցման պահին և դրան հաջորդող երեք տարիների ընթացքում կանոնադրական կապիտալում կատարում է առնվազն 100 մլն դրամ ներդրում, ապա շահութահարկի գումարը նվազեցվում է՝ ներդրման պահին հաջորդող առաջին երեք տարիներին 100 տոկոսի չափով, հետագա երկու տարիներին՝ 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի, քան ներդրման ընդհանուր արժեքի 10 տոկոսը

1. Հայտատուն արտոնություն ստանալու համար դիմում է ներդրումները գնահատող և արտոնություն տրամադրող հանձնաժողով (ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության հասցեով՝ Փետրվարի 20 փողոց, շենք 1)՝ ներկայացնելով հայտը՝ պահանջվող փաստաթղթերով:
2. Հայտը քննության է առնվում և դրա վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան հայտը ստացվելու օրվանից երկամսյա ժամկետում:
3. Եթե Հանձնաժողով ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում կամ չեն բավարարում կարգի պահանջներին կամ դրանց պարունակած տեղեկությունները կարիք ունեն լրացուցիչ հիմնավորումների, ապա Հանձնաժողովը 10 օրացուցային օրվա ընթացքում հայտատուին տեղեկացնում է դրա մասին: 30 օրացուցային օրվա ընթացքում պատասխանը չստացվելու դեպքում հայտը հանվում է քննարկումից:
4. Հանձնաժողովը հայտը քննարկելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում արձանագրությունից քաղվածքի կամ արտոնության տրամադրման մասին որոշման օրինակն ուղարկում է հայտատուին:

Արտոնության տրամադրման կարգը տեղադրված է ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կայքէջում, իսկ «Շահութահարկի մասին» ԼՂՀ օրենքը՝ [www.arlexis.am](http://www.arlexis.am) կայքէջում:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ԼՂՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տնտեսական քաղաքականության բաժին 94-73-78 հեռախոսահամարով: